

**ՍԵՖՅԱՆ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ
ԸՍՏ ԹԱԶՔԻՐԱԹ ԱԼ-ՄՈՒԼՈՒՔԻ**

Բանալի բառեր (Keywords). Սեֆյան Պարսկաստան, վարչական, Թազքիրաթ ալ-մուլուք, վիլայեթներ, մամալեք, խասսե, բեգլարբեգություն, վարչապարածքային

Վարչական բաժանումները Պարսկաստանի պատմության մեջ վաղ անցյալ ունեն։ Սեֆյան Պարսկաստանի (1501-1722թթ.) վարչական բաժանումների հիմքում եղել է ավանդական մոտեցում։ Միաժամանակ Սեֆյան գահակալների համար երկրի տարածքների ընդլայնումը և կառավարման համակարգի կատարելագործումը կարևոր նշանակություն է ունեցել։ Ինչքան ընդլայնվում էին երկրի սահմանները՝ ընդգրկելով նորանոր տարածքներ, այնքան կարևոր նշանակություն էր ստանում երկրի վարչական բաժանումների նորացումը։

Սեֆյան Պարսկաստանի վարչական կառույցի ուսումնասիրման դիտանկյունից արժեքավոր աղբյուրներից է համարվում Թազքիրաթ ալ-մուլուք երկը, որում պահպանվել է սովյալ կարևոր պատմական ժամանակաշրջանի վարչական կառույցի նկարագրությունը¹։

Սեֆյան Պարսկաստանի տարածքները բաժանվում էին երեք գլխավոր խմբերի. վիլայեթ, մամալեք², խասսե շարիֆե³,

¹ میرزا رفیعا، دستور الملوك ، به کوشش و تصحیحی محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردآبادی، با مقدمه منصور صفت گل، به سفارش مرکز اسناد و تاریخ دیپلماسی، تهران، وزارت امور خارجه، مرکز چاپ و انتشارات، 1385/2006,First Introduction p. 1.

² Պետական տարածքներ։

սրանց շարքին պետք է ավելացնել նաև մի չորրորդ բաժին, որն է մոդուֆաթ կամ հոգևոր կառույցների միջոցով ղեկավարվող տարածքները:

Մեֆյան արքունիքը որոշակի համակարգ էր մշակել, համաձայն, որի քաղաքական, վարչական և ֆինանսական բնագավառներում հսկվում էին պետության և վիլայեթների վալիների գործողությունները. վալիները անկախ աշխատելու իրավունք չունեին և զանազան եղանակներով պարբերաբար կամ մշտապես կենտրոնական իշխանության կողմից վերահսկվում էր նրանց գործողությունները:

Պարսկաստանի վարչական կառույցը Մեֆյան հարստության ժամանակաշրջանում ունեցել է բաժանման յուրահատուկ մեխանիզմ, երկիրը բաժանված է եղել չորս գլխավոր վիլայեթների և տասներեք բեգլարբեգությունների: Վալիները ընտրվում էին շահի ամենավստահելի ենթականերից, նրանց իշխանությունը ժառանգական էր, որոնք ըստ իրենց կարևորության հետևյալներն էին՝ Խուզիստանի վալիություն, Լուրիստանի վալիություն, Վրաստանի վալիություն, որը բաժանվում էր Քարթլիի և Կախեթիայի վալիների (Վրաստանի վիլայեթը երկու վալի ուներ) և Քուրդիստանի վալիություն: Տասներեք բեգլարբեգություններն էին հյուսիսարևմուտքում՝ Ադրբեջան, Չոխուրսաադ⁴, Ղարաբադ, Գանջե

³ Արքունական տարածքներ:

⁴ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800 թթ.). - Եր., 1971, Չուխուր-Սաադ: Երևանի կուսակալությունը (վիլայեթ, խանություն, փաշալություն, բեյլարբեյություն, սարդարություն) ձևավորվել է XIV դարի վերջերին, կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում: Թուրքմենական մի քանի ցեղեր XIV դարի վերջերին արդեն միավորված էին ոմն Ամիր-Սաադի իշխանության ներքո, և դրանք իրենց ցեղապետի անունով հետագայում կոչվեցին սաադլուներ: Նրա անունով են կոչվել նաև այդ ցեղերի բնակության շրջանները՝ հին Արշարունիք կամ Երասխաձոր (այժմ Կաղզվան), Ճակատք (Մուրմալու) ու մասամբ Մասյացոտն գավառները և հարակից մի քանի շրջաններ: Դրանք բոլորը միասին կազմեցին մի կուսակալություն, որը Ամիր-Սաադի անունով օտարները կոչեցին Չու-

և Շիրվան, հյուսիսում՝ Ասթարաբադ, արևելքում՝ Մաշհադ, Մերվ, Հարաթ և Ղանդահար, հարավում՝ Քիրման և Քոհ-գիլուիյե և վերջապես կենտրոնում՝ Ղազվին և Ալիշաքար տարածքը (Համադան կենտրոնով)⁵:

Երկրի կենտրոնական շրջանների կամ մահալների վարչական բաժանումների շուրջ Թագքիրաթ ալ-մուլուք-ի մեջ շեշտվում են հարյուր քառասունի հասնող աշխարհագրական անուններ, որոնցից քսանը կապվում են քոչվորներին և ցեղախմբերին, ուր հիշատակվում են նաև երեսուն տեղանունների անվանումները:

Թագքիրաթ ալ-մուլուք-ի մեջ Պարկաստանի վարչական բաժանումները հիշատակվում են և նշվում է, որ այս տա-

խուր-Սաադ կամ Չուգուր-Սաադ, իսկ հայերը՝ Սաաթի փոս կամ Սահաթափոս (Սաադի փոս): Հ. Փափագյանը, վկայակոչելով Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերից մի կալվածագիր (Ֆ. կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1 գ, վավ. 1004), գրում է, որ «Չուխուր-Սաադ» անվան առաջին հիշատակությունը, ինչքանով մինչև այժմ է հայտնի, վերաբերում է 1428 թվականին, միաժամանակ նշելով, որ այդ անունը պետք է տրված լիներ Ամիր-Սաադի կենդանության օրոք՝ XIV դ. վերջերին: Մեզ հետաքրքրող ժամանակների պարսկական մատենագրության մեջ «Չուխուր-Սաադը» թարգմանվել է «Երջանիկ փոս» կամ «Երջանիկ հովիտ» իմաստով: Այդ կուսակալության Չուգուր-Սաադ անունը գործածական է եղել պարսկական ու թուրքական մատենագրության մեջ: Մեր աղբյուրները, ինչպես ասվեց, Չուգուր-Սաադ վիլայեթը սովորաբար կոչել են Սահաթափոս: Օտարածին այդ անունների հետ միասին գործածության մեջ էին մնացել նաև հին հայկական վարչա-տերիտորիալ միավորների՝ Արարատյան երկրի, Կոտայք գավառի և այլոց անունները, որոնք չնայած տերիտորիալ իմաստով լիովին չէին համընկնում նշվածների հետ: Չուգուր-Սաադը, Սահաթափոսը, Արարատյան երկիրը և մյուսները գործածությունից դուրս էին եկել, դրանցից միայն առաջինը շարունակվում է որոշ չափով գործածական մնալ թուրքական ու պարսկական աղբյուրներում՝ ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը:

⁵ مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی (یا تعلیقات 1378/1999، p. 186. تهران

բաժքները գտնվում էին Ավարաջենվիս ների⁶ հսկողության ներքո⁷: Թագքիրաթ ալ-մուլուք-ի հինգերորդ գլխի վերջաբանի երկրորդ հոդվածը բացատրություններ է տալիս վարչական բաժանումների (աշխարհագրության) մասին, որտեղ օգտակար տեղեկություններ են պահպանվել Սեֆյան Պարսկաստանի վարչական բաժանումների վերաբերյալ, որոնք իրականում երկրի զանազան շրջանների կամ մահալների վարչական կառավարման, կամ հարկերի գանձման համար կատարված վարչական բաժանումներ են⁸:

Համաձայն Թագքիրաթ ալ-մուլուք-ի մատնանշումների և առկա ցանկում ընդգրկված շրջանների՝ բաժանումները հետևյալն են՝

Ադրբեջանի բեգլարբեգության և նրան ենթակա տարածքները. Այդ հատվածը սկսվում է հյուսիս արևմուտքից և իր մեջ է ընդգրկում հետևյալ չորս շրջանները՝ Թավրիզը, Չոխուրսաադը, Ղարաբադը և Շիրվանը: Ադրբեջան արտահայտությունը, որը պայմանականորեն գլխավորում է այս ցուցակը, իրականում ընդգրկում է վերը նշված չորս շրջանները⁹, որոնց հարկային պարտավորությունները արքունիքի նկատմամբ իրականացվում էին Թավրիզ կենտրոնի միջոցով:

- Թավրիզի բեգլարբեգություն և ենթակա շրջանները, Աստարա քաղաք, Մարաղա և Մողաղամ ցեղի տարածքը, Աֆշար ցեղի տարածքը, Ղարաղաղ, Չորս (Հորս), Քավրդ, Ղափան¹⁰, Ռոքհան, Քարմրուդ, Ադրբա ցեղի տարածքը, Հաշթրուդ վա Թաբթաբ, Մաղաք, Լահիջան, Դենբելի ցեղի տա-

⁶ Ավարաջե բառացի նշանակում է հաշվեմատյան, իսկ ավարաջենվիս՝ հարկային պաշտոնյաներ:

⁷ مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی (یا تعلیقات 1378/1999، مینورسکی بر تذکره الملوك)، تهران 184.

⁸ Նույն տեղում, էջ 183:

⁹ Նույն տեղում, էջ 188:

¹⁰ Qapanat, հայերեն Կապան, այսինքն լեռնային բարձր ճանապարհ:

րածք, Օջրուդ, Արդալու, Մարաբ, Շաղաղի ցեղի տարածքը, Ջենուզ և Ղարնիաղ բերդ, Մեշկին, Ուլքաալնահար, Մողանաթ, Փաշք, Լաք Մալմասի, Ղարաաղաջ-Թալեշ, Շահասվան Ինալու, Սոլթանիե և Ջանջան:

- Չոխուրսաաղի բեզլարբեգություն և ենթակա շրջանները՝ Նախիջևան, Մակու, Ջարուզբիլ, Սեդրեք, Բայազիտ, Շաղիլու, Աքրադե Դենբլի և Մոարբերդ:

- Ղարաբաղի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, Ջեքամ, Բարդա, Ահնաբադ, Ջավանշիր, Բերգշաթ, Ղարաաղաջ, Լոռի-Փամբակ, Ալքայ-Արասբար¹¹ և Բայազեդլու, Մամայ-Թերքուր:

- Շիրվանի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, Մալխան և Ղաբե Ղալխան, Արաս և Շաքի, Ալվիաութ, Բաղքուբե, Չմեշգրգաք և Ադդաշ¹²:

Խորասան. այն արևելյան վիլայեթն էր, բաժանվում է չորս բեզլարբեգությունների, որոնք են՝ Հարաթ, Մաշհադ, Ղանդահար և Մերվ:

- Հարաթի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, Մարվչադ, Ֆարահ, Խավաֆ, Ջամ, Բալա Մօրդաբ, Փանջղե, Բաղդեյսը, Քարաջ, Ռուդումի, Ղուր և Թուն:

- Մաշհադի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, Մարախս, Նեյշաբուր, Թարշիզ, Աբիվերդ, Ազադվար, Նասա, Մարգեվար, Խորասան, Ասֆարայեն, Հորվազ և Եասաքու, Դարուն, Թորբաթ, Բեզանդուդ:

- Ղանդահարի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, Ջամինդավար և Ղուրխան, Քուշք, շրջանները Նան Քուրի, Լոքե-Բաղդեյս, Թեյմուրի, Խաջե Ալի և Միր Արեֆե Բելուշ ցեղերի բնակավայրերը:

- Մերվի բեզլարբեգություն և ենթակա շրջանները, որի մեջ էր մտնում Միստանի բեզլարբեգությունը ևս¹³:

¹¹ Բառացի Արաքսի ափ:

¹² Նույն տեղում, էջ 72, 73, 74, 75, 76, 77, 78:

Աստարաբաղ, ենթակա տարածքներ և Դարովմարզ, այն հյուսիսային վիլայեթն էր, բաժանվում է երկու բեգլարբեգությունների, որոնք էին՝ Աստարաբաղ իր ենթակա տարածքներով և Դարովմարզը:

- Աստարաբաղի բեգլարբեգություն և ենթակա շրջանները, Քարայի, Հաջիլար, Ջալայեր, Քարաչուրի և Բլուքե-րույե-սահրա և Քուրլան:

- Դարովմարզի բեգլարբեգություն և ենթակա շրջանները, Քասար, Քահդոմ, Րանքուհ, Թոնքաբոնը¹⁴:

Քիրման (բացատրություն չի գրվել), որ գտնվում էր Պարսկաստանի հարավ արևելքում առանց որևէ բացատրության է թողնվել, պատճառը երևի այն է, որ այդ շրջանը ռազմական սահման չի եղել և դեկավարվել է խասսե շարիֆեի կողմից¹⁵:

Իրաք (Աջեմի) . Եզրույթը վերաբերում է Պարսկաստանի կենտրոնական վիլայեթին, որը գտնվում էր Սպահանի և Համադանի միջև:

- Բեգլարբեգության ենթակա շրջանները, Գարուսը և Օլբա, Քամար և Թեղանեմին, Օլբա Հաշթաղ ջոֆթ, Հարսին:

- Մյուս շրջանները որոնք ենթակա չեն բեգլարբեգությանը Քալիդր, Խավար, Սեմնան, Սավե և Հավե (Հավար) և Օլբա Ռեյ շրջաններն են որոնց անունները նշվել է այս բաժնի վերջում:

Քուրդիստանի բեգլարբեգության ենթակա շրջաններն են, Խորխորեհ, Ջավանրուդ, Ուրաման, մատնանշելի է, որ գրքի չորրորդ տեղում անվան դիմաց որևէ նշում չկա, միայն հիշատակվել է եկամուտի և աշխատողների քանակը, Լուրիստան Տիլի, Բախտիարի և Օլբա Բանե¹⁶:

¹³ Նույն տեղում, էջ 79, 80, 81, 82:

¹⁴ Նույն տեղում, էջ 82,83:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 85:

Ֆարս և Խուզիստան. Հարավային վիլայեթերն են Ֆարս և Խուզեստանը (Արաբեստան), որոնց փոքր մասն էր միայն դեկավարվում կենտրոնական իշխանության միջոցով:

- Քոհզիլու և Թավաբեյնի տարածքներ են, առաջին շրջանի անվանումը դարձյալ չի նշվել այստեղ միայն հիշատակվել է եկամուտի և աշխատողների քանակը, այնուհետև նշվել են հետևյալ անունները Բահրեյն, Ջեյդաբադաթ, Սարվեսթան, Դորուդ, Բանդար (Բանդարե մոբարաքե Աբբաս) և Դաշթեսթան շրջանների անունները:

- Արաբստանի վալիությունը, որն ընդգրկում է Սամիրամ¹⁷-ի շրջանը¹⁸:

Հիշատակված տեղանունները այն տարածքներն են, որոնցից գանձվել են հարկեր և որոնց վճարումների քանակի վերաբերյալ տեղեկություններ է փոխանցում Թագքիրաթ ալ-մուլուք-ը: Մի այլ հանգամանք ևս, որը շահարկության առիթ է դարձել աղբյուրագիրների կողմից, այն է որ Չոխուրսաադի բեգլարբեգությունը մտնում է Աղբյուրեջանի բեգլարբեգության մեջ, մինչդեռ Թագքիրաթ ալ-մուլուք-ի պահպանած տեղեկություններից պարզվում է, որ Չոխուրսաադը եղել է ինքնուրույն բեգլարբեգություն: Թագքիրաթ ալ-մուլուք-ի մեջ եղած բացթողումներից կարելի է նկատել այն պարագան, որ հիշատակված երկրորդ հոդվածի մեջ չորս վիլայեթների (Խուզիստան, Լուրիստան, Վրաստան և Քուրդիստան) վալիությունների ներքին բաժանումների և նրանցից կատարված գանձումների վերաբերյալ նշումներ չկան, այսպիսով

¹⁷ Սամիրամը գտնվում է Պարսկաստանի կենտրոնական դաշտում, Դինա Լեռան հյուսիս արևելքում: Նրա դիրքի կարևորությունը նրանով էր ուշադրության առարկա որ գտնվում էր կենտրոնական ճանապարհից հեռու Ֆարս և Սպահան նահանգների սահմանին մոտ:

مینورسکی ولادیمیر ، سازمان اداری حکومت صفوی (یا تعلیقات مینورسکی بر تذکره الملوك) ، تهران ، 1378/1999, p.207

¹⁸ Նույն տեղում, էջ 86:

կարելի է ենթադրել, որ վիլայեթները տնտեսական առումով գտնվում էին կենտրոնական իշխանությունից անկախ վիճակում:

Մեֆյան Պարսկաստանի գրավոր և գիտամշակութային ժառանգության մեջ Պարսկաստանի աշխարհագրության և այլ երկրների ու տարածքների վերաբերյալ կարևոր աղբյուրներից է Թագքիրաթ ալ-մուլուք-ը, որի մեջ պահպանված նյութերը օգտակար և կարևոր են Մեֆյան Պարսկաստանի, այդ թվում նաև Հայաստանի վարչատարածքային բաժանումների ուսումնասիրման դիտանկյունից:

THE ADMINISTRATIVE DIVISIONS OF PERSIA AT SAFAVID ERA ACCORDING TO “TADKERAT AL-MOLUK”

Jilbert Meshkanbarians
(summary)

Persian manual "Tadkerat al-moluk" from the transitional period between the collapse of the Safavid Empire and the early afghan period in Persia. It is a per-eminent source of the Safavid administrative system. The manual consists of an introduction, five chapters, and conclusion. "Tadkerat al-moluk" in the fifth chapter of the second conclusion is explanations of administrative divisions. Where useful information is about Persian administrative divisions of the country's various regions are actually provinces administrative or management, or for withholding taxes the administrative divisions. In fact the numbers of this kind of manuals shows importance of control & management process for Safavid rulers.